



ՕՐԱԳԵՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք
Տառնայն գին 4. Պոլսոյ եւ զաւառաց հո մար 6 մէքիս 4. Եղամնայ 3
Մանուցման ճողը մէկ անգամի համար 2 դրոսէ է. աւելի անգամներու համար սակարկուիլուն կը լինի:

Տէր և Տնօրէն Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

26 փայտ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք
Լազարոս վերաբեռնելու ցամակ եւ այլ գործիքն պէտք է ուղղել Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ, Պոլսոյ Արի ճասակոյ թիւ 20 Տ. ձիւլիկեան է. Գեօրգի սպարաւոր:

Խմբագիր Բ. ՊՈՉԱՃԵԱՆ

4. ՊՈՒԻՍ 27 ՓԵՏՐՈՒՄ

ԱՂԳԱՅԻՆ

ԱՐՉԱԳԱՆԳԻ Ի ՌՈՏՈՒՑՈՅԷ

Ո՛վ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շնորհիւ մասնաւոր նկատմանց և մասնաւոր հաշիւներու, Հայոց լինող հանրական կաթողիկոսի ընտրութիւնն տարի մը յայտարարեալ. այգ մասնաւոր նկատմանը այնպէս պահանջեցին որ Հայրապետական Աթոռն այրեալեալ և եկեղեցին առանց Հոգեւոպետի շարունակէ մը նալ որչափ որ փախաքին մասնաւոր շահույց ծառայողը: Բայց մասնաւոր նկատմանը վախճան կը զբռնեն ժամանակին հետ, և ներկայի բարդաւոր կը համարուի մաքրուած լինելով շատ մը նկատումներէ որոց համար այնքան տուժեց աղէն: Այսօր աղէին խիղճը լսելի կ'ընէ իւր ձայնը. առանց նկատմանց նոր Պատրիարքն կ'ընտրուի և Աղղի Երեսիոյ սանց ժողովն կը պատրաստուի նոյն լընութեամբ և խոհականութեամբ գործել վստի ընտրութեան Հայոց կաթողիկոսի:

Արդի պարագայից մէջ՝ թուրքահայք գործնականապէս ոչինչ կրնան ընել. ընտրութիւնն իրօք Ռուսահայոց ձեռքն է. բայց թուրքահայոց ձայնը բարոյական մեծ ազդեցութիւն մը ունի այդ ընտրութեան վրայ: Պարզ և անկեղծ լինինք նախ քան զամենայն. ըստիւր չիմանանք ընտրողական ժողովոյն թէ մենք այս անգամ զերծ ամեն նկատումներէ՝ Հայաստանեայց ընդհանրական Պետ կը փախաքին տեսնել զիրիմեան Հայրիկ. նոքա, այսինքն Ռուսահայք, բաւական խոհականութիւն ունին առ ոչինչ չզբերու համար Հայոց ստուար մեծամասնութեան կամքն:

Հայրիկի անունն երբ կ'արտասանեմք. գոհունակութիւն կ'ըզգամք յիշելով թէ այդ անունն 23 կամ 24 ասրիներէ ի վեր այնքան մեծ և բարի հոշակ՝ այնքան համազգային համբաւ ստացած է որ՝ ցայսօր, հակառակ մասնաւոր նրկատմանց և հակառակ սմանց նախանձուն՝ անաղարտ և մաքուր մը նացած է հանրութեան մտաց մէջ, Հայրիկ համբաւեալ է իբր ժուժկալ, անշահասէր, հեզ, անյիշաչար, գլխախրտ, ազգասէր և մարդասէր: Ոչ որ կարողացած է այդ ամենեցուն գէթ մին ժխտել և կամ մի ամենափոքր կեղտ գտնել նորա վարուց մէջ: Հայրիկ շատ տառապած է, գիտէ տառապելոյն ցաւը. պանդուխտին հետ լացած, որբերուն աշակից և պաշտպան եղած, սովելոյն հաց տուած, մեծատանց սիրտը շարժած, աղ-

քատին արտօնը սրած և դեռ շատ յայտնի կամ դադարի բարիք է գործած: Վերթու չիւկո երեւակայած և դժած է Երոպայի համար՝ բարեգործ եպիսկոպոսի մը տիպարն. եթէ ճանչցած ըլլար Հայրիկն, փոխանակ մտայածին էակի մը պիտի կարողանար իրական տիպար մը ներկայացնել. աշխարհի:

Ի տղայ տիպաց՝ այս տղերքը գըրբելու պատիւ ունեցողն, լսած և սիրած է Հայրիկի անունը, մինչնոս գեռ պարզ վարդապետ էր և վասպուրականի մէջ առաջին նուաղ լինելով մամուլ հաստատած և Արժուին հրատարակած էր: Այն օրէն ի վեր իրիմեան ողջոյն անձն աղղին նուիրած՝ չէր դադարել յօգուտ աղղին գործելէ, մինչ այլ վարդապետը առաւել նկատողութեան արժանի կը գտնէին իրենց քուսին ու որովայն: Իրիմեան պաշտօնի թեկնածու չէր. բայց փութն նորա զհետ կը պնդէր և միամտայ հաղիւ եպիսկոպոս՝ կը բարձրանար ի գահ Պատրիարքութեան, զոր թողուց միակ հրաժարականաւ մը և վերադարձաւ անվիշտ իւր հայրենի երկիրն ուր անձնուէր տէրութեան և աղղին՝ շարունակեց իւր բարի ծառայութիւնքն: Իրիմեանի համար միեւնոյնն են գահ կամ վանական խուցն, ամեն տեղ նա կը գտնէ միջոց և առիթ օգտակար լինելու Պետութեան՝ որում հաւատարմ է և Աղղին՝ զոր կը սիրէ:

Աղղը այդ անձնուրաց եկեղեցականը կաթողիկոս այսօր կ'ուղէ տեսնել. Աղղին կամքն, յարգուի կամ ոչ, իրիմեան մեծ է միշտ. նա պիտի ծառայէ անարտունջ իւր սիրելի աղղին քանի որ անուանապէս ո՛վ ալ լինի կաթողիկոս, նա պիտի պահէ միշտ Հայոց սրբին մէջ իւր Հայրիկ անունն և բարի հովուի համբաւն:

Փափարքելի է որ Պատրիարքական ընտրութեան մէջ երեւցած խոհականութիւնն տեսնուի կաթողիկոսական ոչ նուաղ կարելու ընտրութեան մէջ:

1885 փետր. 20 ՀԱՅԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆԳՆԻՍ ԵՒ ՌՈՒՍԻԱ
Ի ԿԵԴՐ. ԱՍԻԱ

Անգլիա այնպիսի երկիր մ'է, որ բովանդակ երկրագնդիւն վրայ շահեր ունենալով, ներքին չէ իրեն աչք փակել իւր կայսրութեան երկիրներէն և ոչ միոյն վրայ, ուր արեւն ի խուար չգառնար երբէք: Մինչ զինուորական և քաղաքական կնճիռներ այս պահուս իւր ուշադ-

րութիւնը կը կեդրոնացնեն ի Սուտան, Կեդրոնական Ասիոյ մէջ պատահած գեպրերն եւս իւր ամենալուրջ հողածուլիւնը կը հրաւիրեն: Աւելի քան կէս դարէ ի վեր, Մեծն-Բրիտանիա, աշխարհի այս մասին մէջ, կը նմանի պաշարեալի մը, որ ի հեռուստ կը գիտէ յարձակողին մերձեցման աշխատութիւններն և յարձակման կ'սպասէ: Ռուսիա կը յառաջանայ չափաւոր այլ անընդհատ քայլով մը, դեպ ի Հնդկաստանի սահմանագլուխները: Պետ 23 տարի շանցած, ամբողջ թուրքաստան, սակաւ ժամանակ յառաջ անկախ, Չարին տիրապետութեան ներքեւ անցաւ, և Մոսկովեան հեծելազօրաց յառաջապահներն՝ անձնուր եղանակի մէջ՝ կը կրկնապատկեն իրենց օթեաններն դէպի Հիմալայա: Ռուսական յորձանքն արդեօք որ մը պիտի գայ բաղխիլ Հնդկաստանի դիտական սահմանագլուխը գէթ և անոր խրամատներէն պիտի անցնի: Բեդրատուրկէն և Մոսկովայէն մեկնող շահասէր ժխտմանց հակառակ, Անգլիայիք կ'երկրնչին այս պատահականութեան, և ոչ առանց պատճառի: Երկու միջոցը կը ներկայանան իրենց արգիլելու կամ գէթ յաղաղելու համար յորձակում մը: Նոքա կրնային գըրբուել այն բերդաքաղաքին մերձակայքն, զոր կ'երեւակային թէ վաղ կամ անագան պիտի հարկադրին պաշտպանել. բայց կրկնակի փորձեր ուսուցած են իրենց որ, եթէ կայրենային ի կշիռ ոսկոյ և արեւան սիրել Աֆղանստանի, միւս կողմէ չէին կրնար հոն մտալ: Ասոր փոխարէն, իրենք զիրենք դիւանագիտական կարգադրութեամբ և իրենց անտիտանաց հետ բանակցութեամբ պաշտպանելու, Ասիոյ ներսերն երկու տէրութեանց սահմաններն որոշելու, և խոհեմութեամբ, երկու տիրապետութեանց միջեւ համաձայնութեամբ չէզոք դօսի մը գծելու միջոցն տնին:

Երկար ժամանակէ ի վեր, երկու շահակից կառավարութեանց կողմէ, այս նպատակաւ փորձեր եղած են: 1872 էն սկսեալ Բեդրատուրկէն և Լոնտրայի կառավարութիւնք ի միասին ձեւք առած էին ինքիրն, և այս տարուոյ հօկտ. 17 ին Լորտ կրանտիլի մէջ հեռագրին առ Լորտ Լոֆթիլուս, որ յայնժամ Բեդրատուրկի դեպուտ էր, նպատակ ունեցած էր երկու տէրութեանց պղքեցութեան շրջանակը սահմանել՝ ամեն թիւրիմացութեան և վէճի առաջն տուելու եղանակաւ: Համաձայնութիւն գոյացած էր որ թուրքաստան Ռուսական աղքեցութեան շրջանակին մէջ պիտի մտնէր, մինչ Աֆղանստան Բրիտանական աղքեցութեան պիտի ենթարկուէր: Այն ժամանակ Ռուսը գեռ. Բրաստնոտովքը քաղաքը միայն կը գրա-

ւէին կասպից ծովուն վրայ, և իրենց իշխանութիւնը գեռ միջակ աղքեցութիւն մ'ունէր թիւրքմէնաց անապատներուն վրայ: Բաղմաթիւ Պետութիւնը, յայնժամ անկախ, բայց այժմ գրաւեալ, Չարերու կայսրութիւնը կ'անջատէին Գապուլի Լոնդրին երկիրներէն: Որ և է վէճ անհաւանական և յոյժ հեռուստ կ'երեւէր. սահմանագըրլուց գծումն միջակ շահեկանութիւն մը միայն կ'ընծայէր: Այս սահմանագլուխոց առ հասարակ մեկնակէտ ընդունուած էր Սարի-Բուլի լիճն, Բամիրի սարահարթին արեւելեան մասին մէջ, երկարաձգելով զայն մինչեւ Գոնա-Սալէքի Աֆղանստան գլուխը, Ամու-Տարիայի ձախ եղբայր վրայ: Այս կէտին արեւմտեան կողմն հողային սահմանագլուխներն յոյժ անորոշ կը մնային: Բայց այն թուականէն ի վեր, Արապիքի զօրավարը գրաւեց անդրկասպեան գաւառները. թիւրքմէնները նուաճեցան, և թուրքաստան, գրեթէ ամբողջ, ուղղակի կամ անուղղակի Մոսկովեան ստացուածք մը դարձաւ:

Ռուսը անցան Գարադումի անապատներէն, գրաւեցին զՄէրով, զոր ընդ երկար պաշտպանած էր Բրիտանական նախարարաց « ինձ մի գալիք » քը: Գրաւեցին զՄարախուսկից կ'անցնին այն ուղիներն, որք թուրքաստանէն կը տանին ի Պարսկաստան և Հնդկաստան: Ռուսիոյ տէրութեան այս հողային ընդարձակութիւնք, որը գողցելու մը նայուն և ստիպողական օրէնքի մը կը հնազանդին, « չէզոք դօստոյն » գծման ստիպողութիւնն աւելցուցին, և միանգամայն այս գործողութեան դժուարութիւններն աճեցուցին: Անկո-Ռուսական խառն յանձնախումբ մը այս պահուս պաշտօն ստացած է այդ գործն ի դըրուխ հանելու. բայց մինչ անգլիացի Լիւստուն գորավարը, վէճի նիւթ եղած գաւառին մէջ կը դեգերի ուղեկից զօրախմբով մը, որ իւր թուով և կազմութեամբ արշաւական բանակի մը կը նմանի, Ռուսական պատուիրակները շարք չէին դնացած իրենց պաշտօնատեղին և վերջին լրոց նայելով, դեռ նոր մեկնած են ի սահմանագլուխ Աֆղանստանի:

Եթէ Ռուսիա չլիւթաց իւր պատուիրակները զրկել Աֆղանստանի, Պարսկաստանի և թուրքաստանի սահմանագլուխ վրայ, ընդհակառակն՝ Լոնտրա զրկեց առաւել կամ նուաղ պաշտօնական գործակալ մը, Լէսար երկրաչափին, որ ծագումը Ֆրանսացի է, և որ այս խնդրոյ մէջ մասնաւոր ձեռնահասութիւն մը ունի Կեդր. Ասիոյ մէջ Ռուսիոյ մատուցած իւր երկար ծառայութեամբը: Ճշգրիտ չգիտցուիր պարունակութիւնն այն տ-

առաջարկութեանց, զորս Պ. Լէսար ստանձնած է ներկայել Բրիտանական կառավարութեան, բայց կը հաւաստեն թէ այդ առաջարկութիւնք լաւ ընդունելութիւն չեն գտած: Կը կարծուի զիտնալ թէ, Ռուսական գործակալն իւր կառավարութեանն պաշտօն ստացած է առաջարկել Լոնտօնի կառավարութեան՝ համաձայնեալ գծումը կատարել, սկզբամբ պահելով նաեւ ցեղազրական սահմանագծերը: Ընդ Ունգրիա ընդհակառակին կ'ուզէ լոկ աշխարհագրական լաւ բնութի մը վրայ հիմնել իրենց գործողութիւնները:

Անգլիական կառավարութիւնն Աֆղանստանի կամ Հէրատի համար կը պահանջէ Բարորամիսի տի բոլոր լեռնաշղթայն, ինչպէս նաև Ֆորթիւթի հատարեսան (Մասիֆ) և Միւրղապի կեդրոնական լեռնաշղթայն դարձուիսս գաւառը մինչև Մէրվի շափատանները (սիէր) վերջապէս Պաշտի գաւառն հանդերձ այն դաշտով որ Հէրիբուտ գետոյն երկայնութեամբ կ'երթայ մինչև Պարսկական սահմանադրութիւնը: Ի մի բան, Լոնտօնի մէջ կը պահանջուի Բրիտանական աղբեղութեան վերապահեալ չըջանակին մէջ մուծանել ցարդ անտէր մնացեալ հողերը:

Ռուսիա ընդհակառակին՝ կառավարիչ իբրև հիմ բռնել ժողովրդոց ցեղազրական բաժանումը: Կը հաստատէ թէ, Կէօք-Թէփէի արշաւանաց մէջ իւր զօրաց միշտ տաժանելի պատերազմն, որուն յաջորդած են ապա Մէրվի թէրէթիւրքմէնաց, Սարիզներու և Սալորներու կամաւոր հայատակութիւնը վեհապետութեան օրինաւոր իրաւունք մը տուած է իրեն բոլոր թիւրքմէնաց վրայ, և կը պահանջէ ի մի ձուլել վէճի նիւթ եղող երկրին այն բոլոր ժողովուրդներն, որք այս վերջին ցեղէն են: Առաջարկէն միջև Միւրղապ սահմանագիծը բնաւ դժուարութիւն չը ներկայեց, զի ամուլ անապատաց մեջէն կ'անցնի խնդիրն առաւել բազմաթիւ և կարեւոր կ'ընծիններ կը ներկայէ այս վերջին գետոյն և Հէրիբուտի միջև: Ռուսք, վերոյիշեալ սկզբանց զօրութեամբ, կը պահանջեն իւրայնութիւնն իր օմնակ գաւառն, ուր Սարիզ թիւրքմէնք կը բնակին, որք—կ'ըսեն—չարունակ թշնամութեան մէջ են Աֆղանաց հետ, և Ռուսական զօրաց կողմէ Մէրվի գրաւումէն ի վեր այս քաղաքին իշխանութեանց պաշտպանութիւնը խնդրած են: Յիշեալ Ովախան անցեալ օգոստոս ամսոյ մէջ յանկրաւի գրաւեալ է Գոպուլի Էմիրին զորքերէն, կ'ըսէ Ռուսիոյ նախարարապետութիւնն, և այս ապօրէն նախաձեռնութեան պատասխանելու համար է որ Չարին զորքերը գրաւած են Բուլի-Բաթանի գիւղքն, Հէրիբուտի ձախ արանց և Սարիսէն Հէրատ տանող ճանբուն վրայ:

Այս զինուորական գործողութիւնն երկուք ձգեց Անգլիոյ մէջ, և անգլիական լրագրիք ծանուցին թէ, Բուլի-Բաթանի գրաւումը Ռուսաց ձեռքը կը գնէր զՀէրատ: Միւս կողմէ Ռուսական և Աֆղանեան զօրութիւնք գերթէ գէժ առ գէժ են, և զիպուած մը բաւական պիտի լինի երկու բանակաց յառաջապահներն ի կուլ մղելու, և հողային նոր գրաւմանց պատրուակը տալու Ռուսիոյ: Այս դէպքերուն մեր Անգլի-Մանչեսթր գրացեաց մէջ պատճառած սրտայուզութիւնը փերուաւոր Յին ի յայտ եկաւ Լորտերու ժողովին մէջ՝ Սալիսպլըրի մար-

քիդին մէկ հարցապնդմամբ: Լորտ Կրանվիլ պատասխանեց թէ, նախարարութիւնը ձեռնարկներ քրած է ի Բեդրուպուրի, որպէս զի կըտրուկ հրամաններ տրուին յառաջապահաց հրամանատարներուն՝ Աֆղանեան զօրաց հետ կուռիչէ զգուշանալու համար: Ռուսական կառավարութիւնն անտարակոյս ապահովիչ քայլատրութիւններ պիտի տայ: Բայց լաւագոյն անկեղծութեամբ եղած այս յայտարարութիւնք միջակօրէն միայն կը հրաւիրեն Չարին պատասխանատուութիւնը: Կեդրոնական Ասիոյ մէջ հողային գրաւմանց պատճառն է իրաց կամ զիպուածոց զօրութիւնն, Թիւրքմէն ցեղի մը յանկարծազայ տրամադրութիւններն, Ռուս սպայի մը զիւնանգիտական ճարտիկութիւնն կամ յանդուզն նախաձեռնութիւնը: Երբեք ևս Բեդրուպուրիէն եկած հրամանն մ'արգիւնքն չեն: Ստէպ, կառավարութիւնն պարտի վաւերացնել, երբեք ալ ակամայ, իւր ստորակարգերոց ձեռնարկները: Կեդրոնական Ասիոյ մէջ Ռուսիոյ երկրակալական տիրապետութեան այս յարատեւածումն անխուսափելի երեւցող հարկի մ'արգիւնքն է, հարկ՝ որ բարբարոս ժողովրդոց դրացի եղող քաղաքակիրթ պետութիւնները կ'ստիպէ ընդարձակուել ի միաս այս վերջնոց իրենց յատուկ երկիրը պաշտպանելու համար: Այս հարկը, քառօրը դարու մէջ Սիւր-Տարիայի ախուճըներէն Հէրիբուտի ախուճըն և Բարորամիսիսի դառնվայրերը տարած է զՌուսիա: Դիւրահասկնայի է որ Անգլիացիք կ'երկնչին այս առաջ յառաջգիւմութեան, և իւրովի կը հարցնեն թէ իրենց մրցակիցներէ չպիտի հասնին մինչև այն վերջին պատուարներն, որք կը պաշտպանեն իրենց Ասիական կայսրութեան մեծեղումը:

ԽԱՍՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

Օամ. Սպայակոյտի դերնախաղահ Քահիշը փաշա՝ նախընթաց օրը վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ:

— Կը ծանուցուի թէ, Բ. Գուռը Պ. Հիւրի կողմէ գեռ որ և է պատասխան չէ ստացած այն ծանուցագրոյն, զոր ուղղած էր նմա վերաբերմամբ իրաւարար յանձնարարի մը կազմութեան, որ կայսերական կառավարութեան և Արեւելեան երկրապետաց ընկերութեան միջև կեցող վէճը պիտի կարգադրէր:

— Իրաւունք ունէինք կասկածանաց ներքեւ թողելու, — կ'ըսէ Մոնիթէօր, — Սթանտարտ լրագրոյ այն տեղեկութիւնը թէ, յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւն մը պիտի կնքուի ընդ մէջ Բ. Գրան և Անգլիոյ: Լաւագոյն աղբիւրներէ քաղուած տեղեկութեանց նայելով, այս զրոյց պարզապէս մտացածին է:

— Արքունի թնդանօթարանի վերտեսուչ Ալի Սայիպ փաշա՝ իւր վերջին հիւանդութեանէն կատարելապէս ապաքինած լինելով, երկուշաբթի օրը կայսերական պալատը գնաց իւր շնորհակալութիւնն յայտնելու վեհ. Սուլթանին շնորհաց համար, որով օրացած էր զայն իւր հիւանդութեան միջոցին:

— Պոսպայի և Մատրասի մէջ վերստին քուլէրան ծագած լինելով, Եղիպտոսի առողջապահական խորհուրդն որոշեր է քարանթիւնային թարկել յիշեալ նաւահանգիստներէն եկող շոգնաւերը:

— Վերջին օրերս հրատարակեալ կայսերական իրատէի մը համաձայն, ներքին գործոց նախարարութիւնը չըջարեական մ'ուղղելով բոլոր նախարարութեանց և գաւառական իշխանութեանց, հրաւիրեց զանոնք որ այսուհետեւ զեղծմամբ ամբաստանեալ պաշտօնատարաց գէժ բացուած դատերը Պետական խորհրդոյ գաւառական առեւտրի յանձնեն, որ միակ ձեռնհասն է այս խնդրոյ մէջ:

— Մոնիթէօր Օրինակ մ'ալ կը ծանուցանէ թէ, անգլիացի Պէյքըր փաշա, որոյ լծակիցն և երկու աղջիկները վերջին երկու ամսոյ մէջ մեռած էին, ինք եւս վախճաններ է Ասուանի մէջ:

— Կը ծանուցուի թէ, Անգլիոյ թագուհու յորդորք օրգին՝ Գոննոթի դուքսն՝ յառաջիկայ ապրիլի մէջ մայրաքաղաքս պիտի այցելէ և հիւր լինի վեհ. Սուլթանին:

— Հալասի գործակալութիւնն երէկ ծանուց մեզ թէ, Լորտ Կրանվիլ երկուշաբթի իրկիրոյ յայտարարած է խորհրդարանին մէջ թէ, դալթային խնդրոց վրայ Գերմանիոյ հետ բանակցութիւնք բարեկամական երեւոյթ մ'առած են:

Լոնտօնից եկած վերջին տեղեկութեանց նայելով, առեւտրական գործոց նախարար Սըր Չարլզ Տիւր յատուկ պաշտօնով Պէրլին պիտի երթայ երկու կառավարութեանց միջև համաձայնութիւնն ամբողջացնելու համար: Անգլիական մամուլն միաձայն հաւանութիւն կուտայ նախարարութեան այս որոշման:

— Վերջին տեղեկութեանց նայելով, Աֆղանստանի վէճին նկատմամբ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ շարունակուող բանակցութիւնք գեռ որ եւ է գոհացուցիչ արդեանց չեն յանդամ: Այս նկատմամբ կարծեաց երկու հասանք կը թուին տիրել Բեդրուպուրի մէջ: Չինուորական կուսակցութիւնը կը պնդէ երկր թէ պէտք չէ որ եւ է զիջում ընել Անգլիոյ: Բայց գոհացուցիչ է գիտել թէ, միւս կողմէ կայսրն և Պ. տը կ'իրա կուսակցիչ չեն այս հայրենամու աշխարհակալութեան, որ կրնայ երկու մեծ անբուխեանց ամենակենսական շահուց միասակար ընդհանուր պատերազմի մը առիթ լինել: Վերջին տեղեկութիւնք նախադրացնել կուտան թէ այս իմաստուն տեսութիւնը յաղթող պիտի լինին:

— Փիլիպէէն մարտ 7 թուով կը գրեն սո. Մոնիթէօր Օրինակ մ'ալ թէ, տեղւոյն Պուրղարական լրագրիք Կ. Պոլսէն նամակներ հրատարակած են ծանուցանող թէ, Պուրղարաց Էրզրաքը, գրամական մեծ անձկութեան մէջ գտնուելով, Արեւելեան Բուլիի կառավարութեան դիմած է խնդրելու համար որ օգնէ իրեն: Բուլիի իշխանութիւնք իմացեր են որ Էկզրաքը պիտի պարտաւորի Կ. Պոլսէն մեկնել, եթէ օգնութիւն չարուի իրեն: Առաջին անգամը չէ որ Էկզրաքը կը գանգատի և իւր Բուլիի հօտերուն կը յիշեցնէ այն պարտականութիւնները, զորս ունին առ իրենց հողերու գլուխն:

— Իսթիքն Էրզրէս կը ծանուցանէ թէ, նախարարաց խորհուրդը նախնիաց տուր արտատուր նստին մէջ, Ալպանիոյ մէջ ծագած վերջին խռովութեան, Ալեքանդրի նորընտիր կուսակալ Հազըր փաշայի արուելիք հրահանգաց և ի մօտոյ փարիզի մէջ գումարաւելիք միջադրացին յանձնաժողովոյ խնդիրներով դարգած է: Նախարարաց խորհուրդն, ասոնցմէ զատ, նկատողութեան առեր է նաեւ մեծ

տեղեկութեանց պատասխաններն ի մասին այն վերապահութեանց, զորս Բ. Գուռն ըրած էր վերաբերմամբ Էրզրական պարտուց, և զորս կրնանք այսպէս ամփոփել. 1. վեհ. Սուլթանին վաւերացման ներկայել առաջարկեալ փոխանակութեան պայմանագիրը. 2. Օամ. պատուիրակ մ'ընդունել Էրզրական Պարտուց Յանձնաժողովոյ մէջ և 3. Բ. Գրան՝ իրբեւ հողային պետութեան իրաւունքը ձանձել Սուլթանի ջրանցին պաշտպանութեան համար: Արեւելեան Տրիպոլիոյ կայսրութիւնն եւս խորհրդակցութեան նիւթ եղած է:

— Լոնտօնից եկած վերջին տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ, Անգլիական կառավարութիւնն յոյժ նպատաւոր ընդունելութիւն ըրեր է վեհ. Հաւան Ֆէհմի փաշայի այն գիտողութեանց, զորս ըրած էր Պուրղարաց տարեկան հարկին, Օամ. Ընդհանուր պարտուց մասնակցութեան և Արեւելեան Բուլիի կայսերական Օրէնքին մարտական պայմանաց բարեխոյմման խնդրոյն նկատմամբ:

— Մեր մասնաւոր տեղեկութեանց նայելով, կ'ըսէ Մոնիթէօր, այս օրերս Սուլթանի յուսուց և Պուրղարաց միջեւ ծագած կռիւք չէ ունեցած այն չարագոյնեալ համեմատութիւններն, զորս Բերտոյի շրջանակաց ոմանց մէջ կը վերադրեն նմա: Կրօնական վէճերէ ծագում տանող այս կուռի մէջ բազում կուռիք փոխանակուած են, բայց բարեբաղդաբար ապաւ են վերաբերեալք: Կայսերական կառավարութեան ձեռք առած աղբու և արագ միջոցներուն շնորհիւ, բարեկարգութիւնն իսկոյն վերահաստատուեր է, և նմանօրինակ ցաւալի տեսարանաց կրկնումէն ոչ ևս կը վախցուի եղբր:

— Մայրաքաղաքս հասած մասնաւոր տեղեկութեանց նայելով, կը հաստատուի թէ բոլոր մեծ տեղութիւնք, առանց բացառութեան, ընդունել են Պրանսական կառավարութեան առաջարկն, ի մասին Յանձնաժողովոյ մը կազմութեան, որ պաշտօն պիտի ունենայ առժամեալ կանոնադրութիւն մը պատրաստել Սուլթանի ջրանցին նախարկութեան համար:

Կը կարծուի թէ այս յանձնարարութեամբ յառաջիկայ շաբթու մէջ պիտի դուրսբի ի Փարիզ: Արգէն Գահիթէի Ռուսական գործակալար Պ. Հիթրօլի փարիզ երթալու հրաման ստացեր է, ուր իւր կառավարութիւնը պիտի ներկայացնէ յանձնաժողովոյ մէջ:

— Թարիք՝ իւր երէկի թուով կը պատմէ թէ, Գուզկուճուգ բնակեալ Ատէմ պէյ անուն կառավարական պաշտօնատար մը, տասն օր առաջ, անառքագիր նամակ մ'ըստացեր է, որով 300 ոսկի կը պահանջուէր իրմէ, զոր իւր ծախքերեայ ապարանին մօտ քարի մը տակ պիտի գնէր, ապա թէ ոչ նամակին հեղինակները կ'սպառնային օգը հանել իւր ապարանն: Առաջինական նախարարութիւնն, իրողութիւնն իմանալով, միջոցներ ձեռք առեր է պարտնին բնակաց ապահովութեան համար, բայց չարագործք յերեւան չիւնելով, գործն անհետեւանք մնացեր է: Սակայն նախնիաց գիշեր հաւանաբար նամակին հեղինակները փորձ փորձեր են իրենց սպառնալիքն ի գործ գնել պայթուցիկ նիւթերով լի ուռմը մը նետելով ապարանին պարտէզն, որ պայթեր է առանց որ և է միաս հասնելու:

— Երբ Տայէ Ալիմայնէ Յայ-

Թունի լրագիրն, որ Պիսառը իշխանին թերթն է, իւր մարտ 4 թուով խմբագրական յօդուած մը հրատարակած է, որ Գերմանիոյ նախարարապետէն ներշնչեալ է և յարում ազգուայէս կը պաշտպանէ թուրքիոյ պատմական իրաւունքներն, որք Եւրոպական դաշնագրօք երաշխաւորեալ են: Այս յօդուածը մեծ սրտայուզութիւն պատճառած է Հնովի, Վիեննայի և Լոնտոնի մէջ: Աւստրօ-Հունգարական լրագիրք ազգարարութիւն մը կը համարին զայն տէրութեանց ուսանց դէմ:

—Այս օրերս ոսկւոյն և մէծիտիէին միջև տարբերութիւնը չկը: տարբերութիւն ըրած է, սա պատճառաւ թէ, Օսմ: կայսերական և Գրէտի Լիոնէ Պանթաները հրապարակին վրայ մեծ քանակութեամբ մէծիտիէ կը դտնեն ի հաշիւ Անգլիոյ:

—Ամերիկեան դեսպան Ուալլէյս զօրավարն, որ հանրապետական մ'է, հանրավարական Պ. Գիլլիէնտի Միացեալ Նահանգաց նախագահ անուանելուն առթիւ հրատարական տուեր է իւր պաշտօնէն:

ԱՅԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Խառն ժողովն երէկ զուամբացաւ ի Ղալաթիա, և հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ.

1. Ելմիստի Սինդիկատի վերին պատեանագրոյն նկատմամբ Աղք. ժողովէն բուհարիեալ բանաձեւին վրայ խորհրդակցելով, որոշեց Վաթիկոսիոսական ընտրութեան եղանակի մասին նոր տաւաջարկ մը տանել Աղք. ժողովոյ:

2. Պատրիարքական ընտրութիւնը վաւերացնող կայսերական իրատէխնյա պաղման պատճառաւ, ժողովն որոշեց Թագրի մ'ուղղել առ Բ. Գուսն, Իրատէին փութացումը խնդրելով և Ձատկական տօնի առթիւ Պատրիարքի ներկայութեան պէտքն յայտնելով:

3. Պանտրիանէն հասած ժողովրդային հանրագիր մը նկատողութեան առնելով, սկզբամբ ընդունեց Պանտրիանի աթոռանիստ քաղաք լինելու առաջարկութիւնն, ինչպէս էր ի վաղուց անտի և Պանտրիանի ու Պալքէսիլի առաջնորդական տեղապահ անուանեց զԳեր:

Մովսէս վարդապետ կէօսրիբճեան, պաշտօն տալով նմա որ նախ տեղական քննութիւն մը կատարելով ի մասին Պանտրիանի և Պալքէսիլի տեղական հոնգամանաց և բնակչաց թուոյն, տեղեկագրէ առ Վարչութիւնն և բոս սյունը Պահմանադրութիւնը գործադրելով, առաջնորդական ընտրութիւն կատարէ:

4. Պատրիանէն հասած հեռագրերն ի նկատ առնելով, որոշեց հեռագրել առ Գեր. Պիլիպպոս եպիսկոպոս, թէ ըստո՞յգ է եկեղեցւոյն փակումը, և թէ քահանայն ի՞նչ յանցանք գործեցուցած է եւայլն:

5. Արդիտուողոյս առաջնորդական տեղապահ անուանեց զԳեր. Մեսրոպ եպիսկոպոս Սուբիասեան:

6. որոշեց Եսային-Գարահիսարի առաջնորդ Տ. Պետրոս վարդապետ Ներկարարեանի գրել որ տեղւոյն ժողովները կազմակերպէ կամ պակասեալ անդամները լրացնելով տեղեկագիրն յղէ առ Վարչութիւնն ի վաւերացումն:

7. Ընդունեց Եւզովիոյ առաջնորդ Սրուանեան Գեր. Ներսէս վարդապետի առաջարկութիւնն, այն է՝ առժամեայ կերպիւ մայրաքաղաքս գալ ի դարմանումն իւր հիւանդութեան:

Ժողովն իւր առեանը փակեց ժամ 9ին Ձատիէն յետոյ զուամբուելու որոշումը:

Կրօն. ժողովն եւս առանձին նիստ ըրաւ ընդ առեանապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի, և յետինչ ինչ մասնաւոր խնդրոց կարգադրութեան, հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ.

1. Ըստ բողոքանաց Տ. Ոսկի քահանայի, որ փոխանորդ կարգեալ էր Պանտրիանի ժողովրդեան կողմէ, պաշտօնանկ ըրաւ Պանտրիանի աշխարհական աթոռակալը, նկատելով նորա անձնական հանգամանքն, և որոշեց հարորդել այն որոշումը տեղւոյն քահանայից դատուն և Քաղ. խորհրդոյ:

2. Ըստ խնդրանաց Սամաթիոյ քահանայից դատուն և Նառլը-զարուի Թագ. խորհրդոյ, որոշեց յառաջիկայ երկուշաբթի օրը քննել առաջարկեալ չորս ընծայացուներն և ըստ այնմ ձեռնադրութեան հրաման տալ միայն Նառլը-զարուի եկեղեցւոյն վրայ:

3. Բերայի Թագ. խորհուրդը թէև Սրուանձտեանց Գեր. Գարեգին վարդապետը քարոզիլ խնդրած էր վերստին, սակայն ժողովը նկատելով որ Գարեգին վարդապետ արդէն քարոզչական պաշտօն կրկնապէս ի Գուզկուսնուզ, Բերայի քարոզչութեան խնդիրն առկախեց (՞):

4. Գեր. Վահան վարդապետ Տէր Մինասեան՝ կէօսի-փաշայի, Կարապետ վարդապետ Բագրատունի՝ Պայտոս, Յովհաննէս վարդապետ Արարունի՝ Խուկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ և Ամիրսիոս վարդապետ Թուրքիսեան՝ Բերայի Ս. Յարութիւն եկեղեցւոյ առժամեայ քարոզիչ անուանեց:

5. Գեր. Կարապետ վարդապետ Բագրատունի խառն ժողովոյ որոշմամբ Տիգրանակերտի առաջնորդական տեղապահ կարգուած և գործադրութիւնը Կրօն. ժողովոյ յանձնուած էր: Կրօնական ժողովը նկատելով որ Տիգրանակերտի ազգայինը ճանաչու ծախքը զրկած են և արդեւք մը չէ մընացած ուղեւորութեան, որոշեց յանձնարարել Կարապետ վարդապետի որ ժամ առաջ իւր պաշտօնատեղին երթայ:

Քաղ. ժողովն երէկ չկրցաւ առանձին նիստ ընել:

Կը լսեմք թէ, Խառն ժողովը վաղն Աղք. ժողովոյ պիտի առաջարկէ երկու պատուիրակ զրկել Ս. Էլմիստին, որք են՝ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազան և Մ. Ձերալ էֆէնտի: Նոյնպէս պիտի առաջարկէ հեռագրաւ յանձնարարել դաւառական առաջնորդաց, որք իրենք եւս փոխանորդ կարգեն յիշեալ պատուիրակներն և իրենց փոխանորդազըրերը փութով զրկեն ի Պատրիարքարան, նկատելով որ Վաթիկոսիոսական ընտրութեան առթիւ, առաջնորդաց հրաւիրագրերն՝ Ռուսական հիւպատոսաց միջոցաւ՝ ուղղակի իրենց զրկուած են:

Փափագեան Ստեփան էֆ. ընտանեօք ի Ս. Երուսաղէմ կ'ուղեւորի այսօր յուխտ և երկրորդութիւն Ս. Տեղեաց:

Երուսաղէմի պարտուց բարձման նորընտիր Յանձնաժողովն իւր պաշտօնավարութեան մասին ինչ ինչ հրահանգներ խնդրեք է Աղք. Վարչութեանէն:

Փոհովութեամբ իմացանք որ Տնտես. խորհուրդոյ հրատարակեալ անդամք, ընդ որս և Սաշիկ էֆ. Կամարական երէկ առանձին նիստ ընելով, որոշեք են իրենց պաշտօնը շարունակել ջրուսն իրենց սահմանադրական շրջանին:

Փոհովութեամբ իմացանք որ Տնտես. խորհուրդոյ հրատարակեալ անդամք, ընդ որս և Սաշիկ էֆ. Կամարական երէկ առանձին նիստ ընելով, որոշեք են իրենց պաշտօնը շարունակել ջրուսն իրենց սահմանադրական շրջանին:

Հ Ր Ա Ի Ի Ր
ԱՌ ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍՆՍ
Աղբային ժողովոյ Ժիրդ նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթ, 1 մարտ, ի Ս. Լուսաւորի եկեղեցի Ղալաթիոյ:
Ատեանը պիտի բացուի ժամ 4 ին:
Հրաւիրեալ են ազգային երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:
Մնամ աղօթարար Պատրիարքական Տեղապահ Գեր. Մ. Ս. Բաշտեան
26 փետր. 1885

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
Ա. —Ինդիր կաթողիկոսական. — Տեղեկագիր համարատուութեան կաթողիկոսական Բ. Յանձնաժողովոյ (Գուսնիակ) Ատենագիր Թուրք Պօշտիս

ՏՕԹԹԻՕՐ Ն. ԱՅՎԱԶԱՆ
Մտանագէտ հիւանդութեանց կանանց և տղայոց
Կը դանուի ամեն օր ժամը 7 էն մինչ 11 Պօլիս Եէնի-ճամիի մէջ կայսերական նամակատան դիմաց Նոր Երբքի դեղարանը, իսկ կիրակէ օրերը կէս օրէն վերջը Բերա Ալան փողոց թիւ 1 իւր տունը:

Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն
Ղալաթիա, 28 փետր.
ԸՆԵՅՑ ԱՅԻՆՆԵՐ
Օսմ. Քոնս. միացեալ) գոց. 19, 37
, , բացուեցաւ) գ.կ. 19, 28
, , կէս օրին) 19, 28
Նքիլտ. միացեալ Օսմ. Ռ. 75 35
Բուսնիի երկաթուղի Փր. 47,
Թրամիլէյ Օսմ. Ռ. (գ. կ.) 275
ԸՆԵՅՑ ԴՐԱՅՑ
Օսմանեան ոսկի զր. 100
Անգլիական) 110 15
Գաղղիական) 87 20
Բոյ) 90 8
Գրիմից) 51 10
Գաւազն թուղթ) 8 61
, արծաթ) 89 50
Մէծիտի տարբ. 107
Վեցնոց) 103 18
Հինգնոց) 103 10
Մէթալք) 99
Մանր մէծիտ) 102
Քառորդ) 108 20
Ռուսմանական 5 Փրանքնոց) 78



— 332 —
րագարձին սպասելով: Անկէ իմացան որ Հանրիէթ վիօլէնի պանդոկը չէր վերագարձած:

Մարգիլը իւր մտատանջութիւնը չուզեց ծածկել. Յովհաննէս մեռելի նման տփփոյն էր:

—Հայր իմ, աղաղակեց նա, երթանք Հանրիէթը մենք փնտռենք:

—Պէտք է որ մենք գիտնանք թէ ինչու համար Հանրիէթ հոս չգտնուիր, և ինչ պատահած է, պատասխանեց մարգիլը:

Մարգիլը և իւր որդին՝ մարգիլուհին, Պ. Վիօլէնը և Սիւզանը թողով, վերստին կառք նստան և Բօնդիէօ փողոցը դացին, ուր կառքէն վար իջան. կառքը փողոցին բերանը կսպասէր. կառքայանը իւր աթոռին վրայ նստած կսպասէր միշտ, հաւատարիմ մնալով այն նշանին որ իրեն տրուած էր: Երբ իւր տէրերը տեսաւ, նստած տեղէն վար ցատկեց:

—Ո՛ր է Ֆիրմէնը, հարցուց անոր մարգիլը:
—Իւր պաշտօնին գլուխն է, պարոն. օրիորդը տակաւն տնէն դուրս չեւաւ և ինչպէս կը տեսնէք, կըսպասեմք միշտ: Բայց չեմ գիտեր ինչ պատահեցաւ, այս կողմը երկու կամ երեք վայրկեան առաջ հրացանի ձայն լսեցի:
Յովհաննէս վեր վեր ցատկեց:
—Ա՛հ, հայր իմ, աղաղակեց նա, չափազանց սարսափելով, աղիկն սպաննած է:
—Յովհաննէս, ինքզինքդ բռնէ, դաւախ. այո, բայց եկէք, եկէք, շուտ:
—Ճամբան մութ է, ըսաւ կառքայանը, սպասեցէք:

— 349 —
—Թշուառական, պօռաց երկտասարդը, դո՛ւք ուրիմն իմ ատրճանակս պարպեցիք:

—Այո պարոն, ես:
—Ինչո՞ւ համար, և որո՞յ իրաւամբ, ըստ:
—Պ. տը Սիմէզ, պատասխանեց Լանտրի, ես գործեցի այն հրահանգաց համեմա՞ղոր իմ տիրոջմէս ընդունեցայ:

—Քու տէ՛րդ:
—Հոս ես Ֆրէտէրիքն եմ, Պ. տը Սիմէզի սենեկապանը. բայց այս գիշեր Պ. Բէթրօ-Քասթօնայի տունը տեսաք զիս նաւաստիի հազուատով, ես Սոստէն Լանտրին եմ:

—Դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք էիք, ըսաւ երկտասարդը ապշեալ:
—Այո, ես էի Պ. Բաուլ, և իմ բուն տէրս, Քամաւանտ մարգիլը՝ ձեր հօրեղբայրն է. Պ. Մարգիլը իմ բերանովս կարգելէ ձեզ ինքզինքնիդ սպաննելէ, և կը հրամայէ ձեզ որ ապրիք:

—Ապրի՛լ, անպատիւ ապրի՛լ:
—Ոչ, Պ. Բաուլ, ոչ, Պարոնը ձեր անունը անպատուութեան աղատած է. անցեալը մեռած է անոր հետ, պատիւը ձեզի մնացած է:

—Իմ հօրս ոճիրները յայտնի են:
—Քանի մ'անձանց համար միայն, Պ. Վիօլէն և Պ. Մօրիէն ձեր մօրը բարեկամներն են, Պ. Բէթրօ-Քասթօնա Պ. Վիօլէնի փեսան պիտի լինի. Պ. Յագ. Կրանտէն նոյնպէս ձեր ընտանեաց բարեկամն է: Իրանուցեալ գաղտնիքը ծածուկ պիտի մնայ: Քամաւանտ մարգիլը

Ա.Բ.Բ.Ս. ՔՕՆՍՍՈՒՆԹԻՆ

ՍԻՐԱՎԷՊ Ի. ՀԱՆԿՎԻԻ

Թարգմանեց Օրհրդ Ե. Օրհրդ
Ար ծախուի ամեն Հայ գրախաճա...

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.Յ.Յ.Ն.Ս.Ս.Ս.Ս.Ս.Ս.Ս.Ս.

Կը պատրաստուի աղնիւ քար-
դերու վրայ ամեն ինչու աւ և զա...

ՀԱՅ ԹԵՍՎԱՃԱՌ

Սյս վաճառատուն որ մէկ տարիէ ա-
ւելի ժամանակէ հետէ իւր յաճախորդ...

ԳՐԱՎԱՃԱՌ-ԹՂԹԱՎԱՃԱՌ

Յ. ՍՐԱՄԵԱՆ ԵՒ ԲՆԿ

Պատիւ ունին ծանուցանել ար-
դոյ հասարակութեան և բոլոր գը...

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՆ

Մ. Պ. ԱՍԲԱՆԱՉԱՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ
(Նոր Երևան-Բեք)

Table with 2 columns: Item name and Price. Includes 'Հատոր Ա.', 'Բանալի', 'Գ. Վ. ՍՐՈՒՆԱՉՏԵԱՆՅ

Ա. Ռ. Ա. ՋՆՈՐԳ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԼՆՁՈՒԻ
Տաան և Նինգ օրէն ուսանելի
Աշխատասիրեաց Մէրու Աքէիւն

Կը ծախուի բոլոր հայ գրախա-
ճառաց և շրաժախ Պօղոս և Յակոբ ա...

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱԿՈՒՆ ՊԱՏՈՒՉՕՏՄԱՆ

Հեղինակ

ՏՈՒՔՅ. Ս. Ս. ՓԵՇՏԻՄԱՆԱՆ

Բազմահմուտ Տըքթօրը մարդկա-
յին պատուաստման և ծախի հիւան...

ԿՈՒՆԵԹ-ԻՒԼ-ԼՈՒՂԱԹ

ԲԱՌԱՐԱՆ

ՅՈՒՆԱՍԵՐԵՆԵ Ի ԹՈՒՐԿԵՐԵՆ

Աշխատասիրող

Մէրու Շէրքի և Մէրու Աքէիւն

Պաշտօնեայք Հասարակաց կրթութեան

Գրաքննութեան սենեկին

Հրատարակիչ Գրեթի Պաշտօնեայք

Այս բառարանն, պարունակած ար-
ւեստական և գիտական բառերու ճա...

Մասնաւոր խնամքով, գեղեցիկ և
մաքուր տպագրութեամբ տետր առ...

Առաջին հատորն որ երեսուն երկու
երեսներով երեսուն և մէկ տետրակ...

Տ. Ս. Բ. Բ.

ՕՍՄԱՆԵԱՆ ԼՆՁՈՒԻ

Երկրորդ Տպագրութիւն
Երկասիրեաց
Մէրու Աքէիւն

Կը ծախուի ամեն Հայ գրախաճա-
ռաց և շրաժաճառ Պօղոս և Յակոբ ա...

Ծ Ա Ղ Ի Կ

ԱՐԻԻ ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Մառ Բ.

Ի պէտս վարժարանաց

Աշխատասիրեաց Ե. Մաշտօսեան

Հաւաքածոյն այս Բ. մասին
մէջ գրական խիստ նշանաւոր հաւա...

Կը ծախուի Բ. Գալաֆեան և Վ.
Մարգարեան գրատուններ և ուրիշ

Ա. Ա. Պ.

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՍՈՒՆ

ՆՊԱՐԵՂԻՆԱՅ

Պայք-բազար Թամիզ փողոց քիւ. 35

ճիշդ դեմ առ դեմ աղբիւրին

Մ. Հ. Տէօբաճեանցի վաճառատան

մէջ կը գտնուին նպարեղինաց

վերաբերեալ ամեն տեսակ աղբիւրներ

և որպէս Բ. Են, խաճ. վէ՛ սովորական, լաւ և ընտրա-

դոյն (Մարմինի քաւ) շաքար-թրիւս

թրիւսի, Մարտիկոյ և Հօլանտայի,

այլևայլ տեսակ ըստարմաշէթներէ

զատ, Ֆրանսական բուն Ֆուրնիէ.

Սիպիլի թարմիւղ, Նարոյի և ճէնօ

վայի մաքարօն ու շէհրիլէ.

բրինձ՝ Մախաուսէ և Բի. ղօն

առաջին կարգի. անու շէրքի և

խմորեղէնի յատուկ լաւագոյն

արտադրութիւն. Գրանտիոյ և Այվալը

ընտիր աճառ. քօլա, ձէթ, քարիւղ

(կաղ), ի մի բան, սոյն վաճառատան

մէջ կը ծախուի իր ամեն տեսակ

թրիւսներու լաւագոյնն այն սիլտանի

բաներուն որք առեւտրական այն

ճիւղին կը վերաբերին:

Դիւերը գոհացուցիչ են:

ԱՊԱՌ.ԻՎ ՉԿՅԾ

ՓՈՒՍԳՐՈՒԹԻՒՆ

Կուրսա լալէլի ճամիլի դէմ
թիւ 13 մի նոր դեղարան բացուած է,

Սոյն գեղարանի բացումը
յոյժ օգտակար ծառայութիւն մ'է

Պատուարժան յաճախորդները
գնոց չարաւորութեան հետ դեղօրէն

Սոյն փոխադրութեան առաջին
թիւ Երոպայէ բերել տուած է խիստ

Նշանաւոր է միանգամայն սոյն
դեղարանը իւր Չկան իւղի մասնաճիւղով

Յիշեալ դեղարանը միշտ կը յաճախեն

Ղալաթիա հանրաժանօթ վաճառական

Ա. Ջ. Գ.

Լրագիրս ձեռքէ կը ծախուի
նաև Պահլէ-գաբու շրախաճառ Պօղոս

չէ ուղած երբէք որ անմեղները յանցաւորին պատժոյն
մասնակից լինին: Ա՛հ, Պ. Բաուլ, դուք պարտաւոր էք
սիրելու այս հօրեղայրը որ ղձեղ կը պաշտպանէ,

վար կիջներ հերարձակ և սարստիաճար:
Լանտրի անոր առջեւէն անցաւ առանց կենալու և
ուսանց իսկ նայելու: պանդոկապետը և սպասաւորը ի-